



վեհանձնութեանը մասին, վա-  
սըն զի՛ գուցէ շատ միամտորէն՝  
ես կը մտածէի թէ, մարդ գէթ  
իր անկած ծառը պէտք էր ուռ-  
գեր ու թոյլ չի տար որ չորնայ,  
մանաւանդ երբ պտղատու է ան-  
իր մահուանէն ետքը, երբ ամէն  
կողմէ սղբ ու լոծ լեցի՛, որպէս  
թէ հայ աշխարհէն պակասած ըլ-  
լար մեծագոյն բարերարը, ու-  
շագրութեամբ հետեւեցայ այդ-  
ողբացող թերթերուն, հասկնա-  
լու համար, թէ արդեօք ի՞նչ  
մեծ բաներ ըրած է նուպար հայ  
ազգին համար, որ այս ընդհա-  
նուր համակրական ցոյցերուն ա-  
ռարկան եղած է։ Սրտասահմանի  
թերթերէն շատին մէջ որոշ բան  
մը չէի կրցած գտնել, ազգին  
մատուցած իր ծառայութիւննե-  
րուն մասին։ Իմացայ միայն որ  
քաջ դիւանագէտ մը եղած է, և  
խելացի խնայողութեամբ մը (՝)  
բաւական մեծ հարստութիւն գի-  
զած է։ Միայն Պոլսոյ «Արեւելք»  
թերթէն կը տեղեկանանք որ  
նուպար-ճահնադարեան վարժա-  
րանին համար 3,000 ոսկի տուած  
է, որուն փոխարէն կարագետ  
վարդապետ փաշային ձգած է ե-  
զեր կարգ մը արժէքաւոր հնու-  
թիւններ և 1,000 ոսկի։

«Արեւելք»-ի պատմութենէն ա-  
նանկ կերեւնայ թէ նուպար փա-  
շա այդ գպրոցին մէջ մեծ բան  
մը չունէր։ Անհամբրութեամբ  
կը սպասէինք «Անահիտ»-ի ու-  
րուն մէջ աւելի որոշ տեսնել կը  
կարծէինք նուպար փաշայի հայ  
ազգին համար ըրածները, վա-  
սըն զի Պ. Չոպանեան—ինչպէս  
իմացած էինք—փաշայէն սիր-  
ուած ու անոր հետ մտէն յարա-  
բերութիւն ունեցած ըլլալով  
պիտի կրնար այս մասին ճիշդ ու  
որոշ տեղեկութիւններ տալ մեզի-  
րայց «Անահիտ»-ի մէջ ալ նահ-  
նադարեան վարժարանի կառուց-  
ման համար ըրած նպաստէն,  
Լանկուայի տուած 25,000 ֆրան-  
քէն, Վենետիկ խրկած 15,000  
ֆրանքէն և կարգ մը գաղթու-  
կաններու նպաստներ տալէն  
զատ, որիչ բան մը չի տեսնք,  
և արդէն, եթէ խոչոր բաներ ե-

ղած ըլլային՝ ինքնին կը յայտ-  
նուէին։ Եթէ ասոնց համար է ե-  
ղած հոգեհանգիստները և հե-  
ռազիրները, շիտակ մեր իրար-  
անցումը թեթեւութիւն է, որով-  
հետեւ այդպիսի ծառայութիւն-  
ներու տասնուպա իկը ըրած են  
նուպար փաշայի ուժին ու հա-  
րստութեանը միայն սովոր ու-  
նեցող մարդիկ, ինչպէս են Սպար-  
թաւեաններ, Սանատարեաններ,  
Յակոբեաններ, Կիւլպէնկեաններ  
և շատ ուրիշներ։ Իսկ, եթէ մեծ-  
կակ կտակի մը—որուն լուրը դեռ  
չի ստուգուեցան—համար է որ այս  
երկարակրտական շնայութիւն  
ները կը ըլլան՝ ըստ մեզ ասիկա  
շատ իրաւունք չապար իրեն այդ-  
յարգանքները վայելելու։ Վա-  
սըն զի, մարդ մը, որ այնքան  
երկար ապրած է նիւթական ու  
մտաւորական մեծ ուժով՝ միայն  
իր կենդանութեան ըրածներուն  
համար արժանի է ամէն յարգան-  
քի։

Եթէ նուպար փաշա այս գրա-  
մական նպատաներուն կրկինը ը-  
րած ըլլար, և եթէ մեծներ ազ-  
բատութեան մէջ՝ գիրքով ու կա-  
ցութիւնով շատ համեստ ընտա-  
նիք մը ձգելով, ապահովաբար ոչ  
այնքան աղմուկ պիտի բարձ-  
րանար, ոչ այնքան հեռազիր  
պիտի զրկուէր և հայ թերթերն  
ալ այդքան ընդարձակ փառաբա-  
նական յօդուածներ չի պիտի  
շնայէին իրեն։

Արդ, նուպար փաշայի հայ ազ-  
գին ըրած նիւթական ծառայու-  
թիւնները բազմաթիւ իր ու-  
ժին հետ, կը հասկցուի որ մեծ  
բաներ չեն, գալով իր գիւնա-  
գիտական հանճարին՝ նուպար  
փաշա իր սաղանդը հայ ազգին  
համար գործածելու շատ հոգ չէ  
ըրած։ Իրաւ ճրագիր մը պատ-  
րաստեր է—որուն աւելի ճօխը (՝)  
յետոյ նաղարբէկն ալ պատրաս-  
տեց և նոյն իսկ գործադրութեան  
օկուաւ, — և եթէ ճիշդ են «Անա-  
հիտ»-ի ըսածները, Ներսէս՝ իրօք  
յիմար ու նոյն իսկ դատապար-  
տելի մեծ յանցապարտ մը եղած  
է, փոխանակ նուպարը իր այդ-  
ծրագրով վեհաժողովին խրկելու

խելացի հեռաժողովին ունե-  
նալու քաղաքան աշխարհէն բնա-  
խապար չունեցող լալկան կրօնա-  
ւոր մը առաքած ըլլալուն համար  
բայց նուպար փաշա միշտ սովոր-  
ներ ունեցած է իր սաղանդը յօ-  
գուտ հայուն գործածելու, ու փոյթ  
չէ ըրած կամ չէ ուզած։ Երբ  
նուպար գիտեր շատ սկիզբէն,  
ինչպէս կը վկայէ այս մասին Պ.  
Չոպանեան, թէ մեր յեղափոխա-  
կան շարժումները անխելք ու  
անհեռաժողով կը սկիզբէն,  
եթէ ուղեր, կրնար կասեցնել  
զայնս և սալ անոր խելացի ուղ-  
ղութիւն մը, բայց և ոչ իսկ ձայն  
հանեց այդ միջոցին։ Չենք ու-  
ղեր ունենալ այն կարծիքը թէ,  
նուպար փաշա Ներսէսէն կամ  
Մարկոսէն որդեկան համար՝  
գիտնալով թոյլ առած ըլլայ հայը  
որպէս զի իր սխալներէն պատ-  
ժուի. ատանկ կարծիք մը մեծ  
նախատինք է նուպարի համար և  
ընդունիլ կը ջրէ իր բարու-  
թիւնն ու իր ազգասիրութեան  
մասին տարածուած հաւատաբը։  
Մենք ընաւ չենք արհամարեր  
փաշային ըրածները, որքան ալ  
անոնք իր ուժին անհամադասա-  
խան ըլլան, բայց կը պահան-  
ջենք մերիններէն որ քիչ մը  
համեստ ըլլան, և «Անահիտ»-ի  
պէս թերթերուն ալ խորհուրդ  
կուտանք որ իրենց գովաստնե-  
րուն ու պարտաներուն մէջ միշտ  
բաց դուռ մը թողուն։

**ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ**

Փ. Պոլիս, 5 Փետրվ.  
Փ. Պոլսի էսթէրհազի-Տրէյ-  
ֆիսական խնդիրը տակաւին չը  
վերջացաւ։ Ամէն օր նորանոր  
բարդութիւններ առաջ կուգան։  
Եթէ զորքը միայն մնացած ըլ-  
լար գոյնը դուրս տուող յարգուած  
կեղծաւորին և այժմ չոր հաց մը  
գտնող հանրածանօթ Բսուին  
ձեռքերուն մէջ, թերեւս ցարդ  
լուծուած ըլլար, բայց երկու  
խայտառակ հարուստներ որք յա-  
րաբերութիւն ունէին Պատրիար-

քարանի հետ և որոնք ա՛ն ու գողով  
կը տեսնէին իրենց աւազակ ըն-  
կերներու շարաշար պարտու-  
թիւնը պատամիր երկուստար-  
դութեան կողմէ, գիմեցին Պատ-  
րիարքարան և ուղեցին երկուս-  
տարդութեան ազատաիրական  
շարժումները խելագել, և Պատ-  
րիարքարանը այս երկու ազանե-  
րուն սիրտը չը կորներու համար,  
քննիչ մը չը կրկնէ։ Այս շարժու-  
հաւաւ Ա. Պոլսի ծանօթ Տ. Արսէն  
քահանան, իբր Պատրիարքական  
քննիչ, բայց բոլոր յետագի-  
մականները, որոնց մէջ էին նաև  
հանրածանօթ Թրքամուրը և յար-  
գուած կեղծաւորը, չը կարողա-  
ցան մեղմացուցիչ պարագաներ  
գտնել Արսէն վարդապետի հա-  
մար։ Երկուստարդութիւնը անգամ  
մըն ալ ցցուց իր գոյութիւնը  
և Տ. Արսէն քահանայ այսօր կը  
մեկնի յայտարարելու համար  
Պատրիարքին թէ նախ Արսէն  
վարդապետ պէտք է մեկնի Փ.  
Պոլսէն անապաղ և յետոյ կա-  
րելի է ընարութիւններ կատա-  
րել և կարգ կանոն մտցնել ազ-  
գային գործերու մէջ։

Թո՛ղ Արսէն վարդապետ և իր  
արատաւորուած ընկերները նա-  
մականեր գրեն այս ու այն աղա-  
սին, թո՛ղ Պատրիարքարան գի-  
մեն, թո՛ղ եկող քննիչին ոտ-  
քերը համարեն, երկուստար-  
դութիւնը սրտած է, որինաւոր  
միջոցներով, ազգային մարմին-  
ներ կազմել, և բարեկարգել  
գպրոցը և եկեղեցին։ Այս ընտ-  
րութեանց մէջ պիտի ընարութիւն  
այնպիսի անձեր որք պիտի ու-  
նենան բաւական կամք և կրքով,  
որպէս զի ոչ միայն դէժ՝ դենն  
յետագիմականներու յարձակու-  
մերուն, այլ նաև գրակա՛ն գոր-  
ծունէութիւն ցոյց տան։ Չենք  
կարծեր թէ երկուստարդութիւնը  
անցեալ անգամի սխալ փորձա-  
նութենէն չօգուտի և ընտրէ ան-  
պիտի թոյլ անձեր որոնք, համե-  
րաշխութեան գնալափարին հետե-  
ւելով, պատճառ դառնան շփոթու-  
թեանց և յուսախաբութեանց։  
Երկուստարդութիւնը իր մէջէն  
պէտք է ընտրէ իր ազգին գոր-

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

**ԱՔՍՈՐԵԱԼԸ (՝)**

Օղբ պարզ էր ու գեղեցիկ։ Մեհա-  
մըտի Մատիթիլ ընկերութեան լա-  
ծիտօնը շոգնաւոր, ճեղքելով եզեան  
ծովը կը սլանար գէպի Սելանիկ։  
Գարնանային արեւը իր լուսավառ  
ճառագայթներով կը հեղհեղեր ան-  
սահման տարածութիւնը։ Աչքը հա-  
զիւ կրնար նշմարել կապոյտ երկին-  
քին վրայ նուրբ, թափանցիկ ամպ  
մը, որ անուրբի պէս մերթ կերե-  
ւար ու մերթ կանհետէր։ Ծովը կը  
փալիւր յստակ ապակի նման, ա-  
լիքները իրարու ետեւէ կը սահէին,  
ինչպէս կոյսի մը բազմական յուզ-

մունքները, լուի ու մեղմիւ ազա-  
մանդեայ շիթերու վերածուելով։  
Անթիւ ճամբորդներու այս համա-  
խորտակ տիպարի, ձեռի, սարսափ ու  
զոյնի խիստ այլազան նկար մը կը  
ներկայացնէր. մարդկային ամէն-  
ցեղ իր ներկայացուցիչը զրկած էր  
հոն, իրեն բնիկ սովորութեամբ և  
սարսափով։ Կարծես թէ շոգնաւոր  
բազմացեղ աշխարհի նաւահանգիստ-  
ներէն նմուշներ կը տանէր ազգա-  
գրական ցուցահանդէսի մը։  
Մարդկեղէն սիպարներու այս խառ-  
նիճաշանձին մէջ, շոգնաւորն ան-  
կիւնը լսիկ ու մտազբաղ կծկտած  
նստած էր պուլկար մը, ատանձին  
այս բազմութեան մէջ, հայրենակից  
մը չի կրնալով գտնել։  
Չորրորդ օրն էր որ կը ճամբոր-  
դէր, և իր չուրջը խօսուած բազ-  
մազան լեզուներու մէջ պուլկարներէն

բառ մը անգամ չէր լսած։ Իր քովը  
տեղաւորուած էին քանի մը թուր-  
քեր իրենց կիներու հետ, որոնք բու-  
լորովին կծկուած՝ կրեանին խնամ-  
քով կը ծածկէին կեղտոտ կեպուր-  
ներէն։ Կարճ խօսակցութիւն մը  
մերթ ընդ մերթ կը փոխանակուէր  
պուլկարին և թուրքերուն միջեւ,  
ուրկէ ետք, պուլկարը կամփոփուէր  
իւր աղքատ կապոցին քով։ Մերթ  
ոտքի կելլէր, գիտելու Արշիպեղա-  
քոսի վեհաշուք սեսարանը, ու կըր-  
կին խոր մտածութիւնը մէջ թաղ-  
ուած՝ իր սեղը լը գտնար։  
Բոլոր ուղեւորներու երեսին վրայ  
կը փայլեր գոհունակութեան այն  
արտայայտութիւնը, որ անհունու-  
թեան ծարաւ ունեցող հոգին կը  
զգայ, երբ կուզէ թափանցիլ անհուն  
ընտրութեան գաղտնիքէն ներս։ Պուլ-  
կարը իր չուրջը գտնուողներու մէջ

ամենէն երջանիկն էր։  
Ինչպէս զովասփիւռ գարունը,  
բնութիւնը կը կենդանացնէ, զուարթ  
ու յուսահատու մաքերու աշխարհ մը  
զինքը կուրախայնէր կենսալիւր. ա-  
րեւը կը տաքցնէր զանի, կուտեցնէր  
անոր կուրծքը, որ ուրախութենէ  
ու հրջաեկութենէ, յուզված հո-  
գին խորէն խանդավառ օրհներգներ  
կատաղէր դէպի Աստուած։  
Տասն երկու սարի Փոքր-Ասիոյ  
մէջ գտնու ու սաճանելի աքսորանքի  
ենթակուելէ ետք, պուլկարը կը  
վերադառնար իր հայրենիքի հինա-  
ւոր օճախը։  
Դեռ սմիս մը ստալ, երբ ազն-  
տութեան ցանկալի լուրը իրեն չէր  
հասած, լալով կը մտածէր իր բնա-  
նիքին վրայ, ու ատաջին անգամ  
անակնկալ լուրը աննեղուն, կարծեց  
թէ կրնալ կը խաբեն ու չուզեց հա-  
ւատալ։

(՝) Թարգմ. Վելիքոֆէն։

ճերը վարելու կոչուող անհատները :

Իբր հաստատութիւն իմ այս գաղափարին , յիշեմ Աղքատախնամ Մասնախումբը և Գրասիրաց Եղբայրութեան նոր վարչութիւնը : Աղքատախնամը ընտրուած էր թաղական խորհուրդէն և կը բաղկանար յառաջիկային անհատական արարելէ : Մինչդեռ զայն ընտրող մարմինը որ ընդհանրապէս տարեց անհատներէ կը բաղկանար , յարձակումներու առջեւ կ'ընէր , իր վերջին շունչը կը փչէր , իրմէն ծնած մարմինը , իր կրած հարուածներէն աւելի զօրացած , երիտասարդ ուժերու յատուկ յամառութեամբ , կը շարունակէր իր գործը և երեք ամիսներու միջոցին հոսիւր հարիւր ֆրանքի մօտ հասոյթ մը ստեղծելով , ազբաններու նախախնամութիւնը կը լրար : Հակառակութիւն , զբաղարարութիւն և նախատինք տեղացիին ամէն կողմէ , բայց առանց արգելիքի : Աղքատախնամը իր եռամսեայ հաշիւը պատրաստելէ և զայն հրատարակութեան տակ յետոյ , պիտի շարունակէ իր գործը անարգել : Միւս կողմէ Գրասիրաց Եղբայրութեան ընթացքայինը կը շարունակէ և գրատունէն օգտուող անհատներու թիւը հետզհետէ կ'աճի : Անշուշտ Գրասիրաց Եղբայրութիւնը իր առջեւ ունի մեծ ծրագիրներ , բայց այսչափ հակառակութեան և շփոթութեան միջոցին երիտասարդ ուժերու յամառ աշխատութիւնը արժանի է գովեստներու :

Այս ձեռն գիշերային վարժարանի մը սկզբնաւորութիւնը եղաւ բնական յաջողութեամբ : Իժմախառնութիւնը զաստատները և թէ աշակերտները հարկաւոր յարատեւութիւնը չըցուցուցին : Այս գործին մէջ երիտասարդութիւնը չը պարզեց իր կորովը և յարատեւութեան ոգին : Հայաստանցի մշակներ որք բնաւ կարգալ զրել չէին գիտեր , ամենէն

Շատ արքայականներ վերադարձած էին , բայց շատեր ալ իրենց սակրները հոն թողած էին : Ճիւղեր նախազգացում մը որուն զուր յաջութիւն կը ջանար , միշտ կը փսփսարականջին , երբ իր վերադարձին վրայ կը մտածէր , թէ ինքն առ անցողիկութեամբ արտաքին կողմէ : Շատ գիթախիտ մարդիկ , որոնց ծանօթացած էր , կը ցուակցէին իրեն ու կը միտնային զինքը , բայց երբ ասոնք կը բաժնուէին , կը զգար որ այդ սփոփանքները յիշուող չէին ազգած իր վշտով համակուած սրտին : Արքայ չէր կրցած հասկնալ իր արքայութեան պատճառը , կը յիշէր թէ օր մը զինքը զուրս հանեցին բանակն , որ ասոնց հարցում փորձի նստած էր ամբողջ Խոթն ամիսներ , ցկեանս բունտարկութեան զատապարտուած աւա-

աւելի յամառութեամբ վարեցան սովորելու գաղափարին և ասոնց մէջ ամանք հիմա կարող են կարգալ զրել և իրենց գաղափարները բացատրել : Այս գործը իր անհուն կարեւորութիւնը ունի մեր ազգին համար և կը յուսանք թէ երիտասարդութիւնը գալ ձեռն աւելի մեծ ուժերով և զօրաւոր կամքով յառաջ պիտի տանի զայն :

Պոլսից , 27 Յունիս .

Երկու տարի առաջ , երբ զէպրելն յետոյ , իր աւերակ բունէն հալածուած հայը , կը հեռանար շուարած աստանդական կեանք մը սկսելու համար , օտար հողերու հիւրասիրութեան ապաստան , եղան այնպիսի ազգեր որոնք ամէն մարդասիրական զգացում մէկ կողմ ձգելով , իրենց գոնեւոր գոյեցիկ թշուառ հիւրերուն առջեւ : Այս կարգի ազգերու մէջ , իր ծայրահեղութեամբ առաջին տեղը բռնեց ռուման կառավարութիւնը , որ ամէն միջոց ձեռք առաւ արգելելու համար հայուն այս երկիրը մտնալ : Բայց հայը , իր ճարտիկութեամբ այս արգելքներուն դէմ հնարքներ խորհելով , յաջողեցաւ Ռումանիա մտնել , և երկու տարի ետքը , Ռումանիոյ մայրաքաղաքին մէջ իսկ կարեւոր դիրք մը գրաւած է :

Քալէ Մօշիլուս մեծ պողոտան այսօր հայ արհեստագործներու և խանութպաններու բռնած տեղն է . երբեմն եւրոպականացած , մաքուր և կոկիկ , յաճախ ալ արեւելեան ձեւով կահաւորած խանութի մը մէջ , միշտ մաքուր սակայն , բազմաամառ ուրիշ քաղաքներու :

Բայց որքան ուրախալի պիտի ըլլար , երբ իր նիւթական ճարտարութեան ու յաջողութեան միտցնէր նաեւ բարոյական յառաջդիմութիւնը : Որչափ գովելի քայլ մը ըլլած պիտի ըլլային , եթէ Պոլսիցի հայ պանդոխտները , որոնք մեծ մասով քաջարի և սրտատ Ռոտոթոցի-

գակներու և մարդասպաններու միջեւ : Տարին փաշային տոնու և յայտնեցին որ կ'արքային Անկարա : Ինչու և քանի տարուան համար , չըրին , և երբ փաշային քովէն գուրս հանեցին ինքնիրեն , բնաւ չ'ըստ օտար երկիր մը կուզարկեն թշուառ մեծներու համար : Եւ հինգ տարի շարունակ օտար երկրի մէջ մեծներու երկիրով կը պահուէր ու կ'ըլլար , ստանց գինաւորութիւնը կեանքի վերջին վայրկեաններուն տարի պիտի ունենային իր սիրելիները տեսնելու : Աւ հիմա այնչափ քով կ'երթար ժամ մը եւս , և պիտի կոխէր այն գետինը որ վերնդասնաւոր յոյսը բարբոթի կարած էր . երկու օրուան ճամբակ ետք իր տանը պիտի ըլլար ու զրկուէր անոնք որոնք կեանքին

ներ են , մանէին յառաջիկամական այս երկրորդ և կարեւոր շրջանին մէջ : Պոլսից , որ , բազմաամառ Պոլսիցի , թուով նոսալ գաղթականութիւն մը կը պարտնակէ , այսօր կը պարծի , բարձր Ռումանիոյ մէջ , իր նոր ձեռնարկներով : Արդեօք ժամանակը չէ՞ որ , մեր պարէնցի պանդոխտներն ալ բարի նախանձով մը հետեւին իրենց Պոլսիցի եղբայրներուն օրինակին , հոս մանուաւոր որ շատ աւելի զիւրին է այդ կարգի հիւնարկութիւն մը հաստատել , Իսկապէս , զարմանալի է թէ ինչո՞ւ ցարգ Պոլսիցիք այս մասին չեն խորհած :

«Նարժուհի է՛ երուն մէջ կը փափագէի հրաւիրել զիւրեք քիչ մը զոհողութեան վարժուելու և գիւրութիւններ հայթայթելու անոնց որոնք այդ կարգի նպատարը ձեռնարկի մը առաջին փորձը պիտի ընեն :

ԽԵ՞՞՞՞

Ն Ո Ւ Է Ր

Վիեննա բնակող ազգային մը երեք օրինակ Շարժումի տարեկան բաժնեգիրը զրկած է մեզ , ինչպիսի խմբագրութեան իր յարմար գասած տեղերը Շարժում ուղարկել :

Ուստի փար. Յէն սկսեալ Շարժում պիտի զրկուի . Հայկական Ընթացքարան Ստամբուլ (Արարատական) . Հայկական Ընթացքարան Դարէժ . Հայկական Ընթացքարան Լառնաքա (Կիպրոս) :

Ք Ր Ո Ն Ի Կ

Ս. Պատրիարք հօր հաղորդուելու է պետական հրաման մը , որուն համեմատ , տաճիկ կառավարութիւնը իբր թէ պէտք եղած հրամանները տուած է եղբւ պատկանեալ իշխանութեանց , Վանի կրօնափոխութեան նման հանգամանքներու տաղքն առնելու համար :

—Վանի նորընտիր առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս զժկամա-

կութիւն յայտնած ըլլալով իր պաշտօնատեղին երթալ , Տ. Գրիգորիս եպոս. Ալէքսիսեան հաղորդելու է Ս. Պատրիարք հօր որ , ինք պատրաստ է մեկնիլ որքան ատեն Ազգ. վարչութիւնը յարմար տեսնէ իր հոն մնալը :

—Ս. Պատրիարք հայրը անօրինակ է որ Գարակէօզեան կուակի վերաբերեալ բոլոր թղթերը հրատարակութեան տրուին զբարոյիկի ձեւով , Այս գրքոյկին հրատարակութիւնը մէկ ամիսէն պիտի պատրաստուի :

—Ս. Հայրապետը 300 լուպիլի նուէր մը զրկած է Ազգ. Հիւանդանոցին , ցաւ յայտնելով որ չէ կարողացած իր փափագած ինչպի կարեւոր գումար մը զրկել այս հաստատութեան որուն օգտակարութիւնը այնքան մօտէն ճանչցած էր , Պարսկաստանի և ուրիշ տեղերու բազմաթիւ կարօտեալներուն ալ նպաստ զրկելու հարկին մէջ գտնուելուն համար :

—Պիլիպէի Վեհուհի վարդապետը որ մասնաւոր նամակով մը կրօն. Ժողովի դիմած էր , և որ Մարի-Լուիզ իշ անուհոյն յուզարկաւորութեան ներկայ գրանուելու պատրաստակին տակ ինքզինքին ձեւ մը , հանդամանք մը տալ ուղած էր , չի կրցաւ լր փափագին հասնիլ . Կրօն. Ժողովը և ոչ իսկ պատասխան տուաւ նամակին :

—Ս. Պատրիարքը մասնաւոր շրջարեականներով դիմած է ունեւոր հայ անհատներու , և բացատրելով Հայաստանի մէջ տիրող շքաւորութեան , անթուլութեան աղետարեք հետեւանքները , կոչում ըրած է անոնց խղճմտանքին , ինչպիսի զոր աւան մէկ իր կարողութեան շափով մասնակցի կարօտեալներու և սովեալներու նպաստ հաւաքելու գործին :

—Ս. Պատրիարքին անուան տօնախմբութիւնը շնորհաւորելու համար , Պոլսոյ ազգային վարչութիւնը , թաղական խորհուրդները , հոգաբարձուները և ուրիշ ազգային պաշտօնեաները , ամ-

մէջ անգամ մըն ալ տեսնելու հաւատարմ չէր ունեցած :

Երբ լրջօրէն կը խորհէր ամիս մը առաջուան իր գծարար վիճակին վրայ ու երբ միաքր կը բերէր իր աշխատանքները իրեն , ուրիշ թեան արցունքներ կը վազէին աչքերէն : Յանկարծակի զրկուիլ սիրելի կնոջմէն ու երախաներէն , որոնց համար կեանքը գոնեւ պատրաստ էր , ստարգորով աշխարհի մութ անկիւն մը , երբեք լուր չտեսնելով անոնց մասին , ամենայն զոհունք երբեք չի տեսնելու անցուտ թեւեւէն , և ապա յանկարծ անչքով վերադառնալ , միթէ աշխարհի վրայ ալ կ'անուշ երանութիւն կարելի է երեսակակ :

Ժամերն ու վայրկեանները անվերջ կը թուէին , կուզէր յիշատակուիլ չոգնուար Անկարիկ հասնելուն միայն

արթնալ . Երբ պահ մը կը մտախիւր , յանկարծ ստակուսով վեր կը ցատկէր իրեն կը թուէր թէ չոգնուար կեցած է , ուղարկութիւնը կը լարէր և երբ կը լսէր չոգնուարին Ֆէֆէցը կուրախանոր որ սխալած է . ինչպիսիք ազու սոգ կը զնէր ու կը խնդար :

Փոքր-Ասիոյ անտանիքի մէջ բնտին մէջ երեք տարի : այլն ետք , իրեն թոյլ տրուեցաւ ստակական կանստութեան տակ ապրիլ քաղաքին մէջ :

Իր յիշգրտութեան մէջ կը վերականգնանաւոր մտայն բանախ արհաւիրքը . իր զժխային սղմուկով , ծանր շրթունքներու շատախնոր , որոնք խոստումեղով շատ ազնեւոր ազգակներուն ու չոգնուարի Ֆէֆէցին , ծնունդ կ'ուստային ստակապետը երազներու և անոնցի , զձուանջներու :

Պ Ս Ի Ր Ե Մ Ձ Ե Ա Ն  
(Շարունակելի)

սոյս 2ին Պատրիարքարանի մէջ հասարակութիւնն Բազմաթիւ օտար ներկայացուցիչներու մէջ կը գտնուէր նաեւ Պուլկարիոյ էկզարքիին կողմէ եկեղեցական մը և Պուլկարիոյ գործակատար Մ. Մարքով որ շնորհակալութիւն յայտնեց այն քրիստոնէական եղբայրասիրութեան համար, որով Ս. Պատրիարքը Մարի-Լուիզ իշխանուհւոյն հոգեհանգստեան ժամանակ իր ներկայացուցիչը զըրկած է պուլկար եկեղեցւոյն մէջ: Յունաց Պատրիարքը, լատին ու հռոմէական եկեղեցիներու ներկայացուցիչները կրօնական նկատումներով զլացած էին այն ձեւակերպութիւնը կատարել: Մ. Մարքովի ներկայացած պահուն Ս. Պատրիարքին քով կը գտնուէր նաեւ Յունաց Պատրիարքին կողմէ եկած Տ. Բոննոյանցի Նիս Մ. վարդապետը:

ԿՈՒՋՈՒԻ

13—14 տարեկան տղայ մը որ ձեռագիր կարդալու չափ կարող ըլլայ: Դիմել խմբագրութեանս:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ Թրանսայի Հանրապետութեան նոր նախագահ անուանուած է, Մերալոյաի նախագահ Պարոն Լուպէ: Տրէյֆիւսի գատին վերաբերնուած իր հակառակորդները իր ընտրութեան հակառակ էին, իրենց ընտրելին էր Մէլինը:

ՖԷԼԻՔՍ ՖՈՒԻ ՄԱՀԸ

Արդէն նախորդ թուով ծանուցած էինք Ֆրանսայի Հանրապետութեան նախագահին մահը: Ահա առիթ քանի մը մանրամասնութիւններ իր վերջին վայրկեաններուն վրայ:

Պ. Ֆոն մեռած է կաթուածէ, անցեալ հինգշաբթի իրիկուն ժամը 10ին: Քանի մը օրէ ի վեր սրտին ու կուրծքին զանազան կողմերը ցաւեր կը զգար, և սակայն չէր ուզած իր զբաղումները ընդհատել:

Հինգշաբթի իրիկուն մինչեւ ժամը 6 պոստալի ելած էր: Երբ տուն վերադարձաւ, նուազած ինկաւ. ծոծրակին մէջ ցաւեր կը զգար. «Կը մեռնիմ, ըսաւ, սըրտիս հիւանդութենէն»: Յետոյ կրկին խօսելու ջանքեր ըրաւ ըստ միայն հետեւեալ խօսքերը կարողացաւ բռնել. «Ներողութիւն կը ինդրեմ բոլոր անոնցմէ որոնց չարիք հասուցած եմ»: Կէս ժամ ետքը, բոլորովին զգայնութիւնը կորսնցուց և երեք ժամուան օրհասէ մը ետք հոգին աւանդեց:

Քահանայ մը փնտռելու համար զըրկուած սպասուորը, առաջին անգամ Ռէնօ արքային հանդիպելով, զայն կանչեց սա բառե-

րով. «Շուտ եկէք, հիւանդ մը կը մեռնի»:

—Տրէյֆիւսի վերաբերնութեան կուսակից թերթերը շատ գէշ լեզուաւ կը խօսին Ֆէլիքս Ֆոուի վրայ: «Վեհերս ալ գլտեմք, կըսէ Սոնա, թէ ինչ ընթացք բռնեց Ֆոն Պուրմու: յի նախարարութեան հանդէպ, որ արմատական կուսակցութեան համակիրներէն էր, թէ ինչպէ՞ս պաշտպանեց անպատիւ Մէլինը և իր նախարարութիւնը: Յայտնի է նաեւ այն գերը որ տարիու կէսէ ի վեր կը խաղայ Տրէյֆիւսի գործը խեղդելու համար»:

Յաջորդ թուով մեր ընթերցողներուն կր ներկայացնենք Ֆէլիքս Ֆոուի համառօտ կենսագրութիւնը:

ՖԷԼԻՔՍԻ ԿՂՁԻՔ

Հրամանատար Միլլէր կը ծանուցանէ թէ Իլո-Իլո քաղաքը առնուել է: Սմերիկացիք առաջարկեն են որ պատմամենքը անձնատուր ըլլան, բայց իրենց բռնած դիրքը պատճառ եղած է թշնամութեանց վերակսելուն: Ապստամբները քաղաքը կրակի տուել են. այրուած տուներուն մէջ կը գտնուին նաեւ ամերիկեան և գերմանական հիւպատոսօրանները:

Հրամանատար Օթիս իր կառավարութեան տեղեկացուցած է որ վեց ամերիկացիք վիրաւորուել են ապստամբներու յարձակումներէն. տեղակալ մը թնդանթ պարպած առեն ծովն ինկեր և խեղդուել է:

Ապստամբները յուսահատ կռիւ մը կը մղեն: Կը կարծուի թէ իրենց պատերազմական մթերքները նուազած են, ամերիկեան զօրքերը միշտ յառաջ կը խաղան: Ակիւնալտո իրեն բանակատեղի ընտրած է Մառիլան որ ամերիկեան թնդանթներէն պատրաստուած է:

ՁԷՆԸՆԻՅՑՈՒԹԻՒՆ

Պէրլինէն կը հեռագրուի թէ Հոլանտական կառավարութիւնը հաւանած ըլլալով որ գեոպանախորհուրդը գումարուի Լա Հէի մէջ, Ռուսիա ի յարգանս Հոլանտայի թագուհոյն, հոլանտական կառավարութեան պիտի թողու պետութեանց պաշտօնապէս հրաւեր կարգալ, որպէս զի իրենց պատուիրակները զրկին: Գերմանիոյ ներկայացուցիչը պիտի ըլլայ Լա Հէի գերմանական գեսպանը:

—«Նովոսթի» ռուս թերթը կըսէ թէ ռուս կառավարութիւնը զէնընկեցութեան գեսպանախորհուրդուն մէջ պիտի առաջարկէ Պալքանեան պետութեանց չէզոքացումը Չոյիցերիոյ և Պելճիքայի պէս:

—Ռուս մամուլը պատասխանելով Անգլիոյ մամուլին այն դիտո-

ղութեան թէ Ռուսիա պէտք է իր անձին օրինակով նախակարպետ հանդիսանայ զէնընկեցութեան գործին, կըսէ թէ, Ռուսիոյ զօրութիւնն է որ մինչեւ հիմայ կարողացած է Եւրոպայի խաղաղութիւնը ապահովել: Անգլիոյ քաղաքականութեան ծրագրին մէջ միշտ պատերազմի սպառնալիքներ կան, բայց հիմայ զրկուած է զանոնք գործադրելու միջոցներէն, քանի որ Ռուսիա իբրեւ պահակ կը հսկէ աշխարհի վրայ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ասկէ առաջ գրած էինք թէ Տուրքիչի մէջ զիւղացի մը սպաննած ըլլալու ամբաստանութեամբ ձերբակալուած երկու պուլկարները մահուան դատապարտուած էին, և թէ քաղաքին ՄԵՐ ըստ լիտը և աղքեցիկ անձնատուրութիւններ, մասնատոր գիմումով իշխանէն ներում խնդրած էին:

Այս անգամ կ'իմանանք որ Ն. Ա. Բ. Իշխանը մահուան վճիռը մշտնջենական բանտարկութեան փոխած է:

—Սլիվէնի մէջ սկսած է հրատարակուիլ «Բէլուսլիքա» անուն պուլկարներէն թերթ մը որուն նպատակն է աշխատիլ աղատ հանրապետութիւն մտցնելու երկրին մէջ, հիմնուած ապակեգրոնացման կղզուքներու վրայ, օրինակ ունենալով Չուիցերիան:

—Պուլկարական նոր դահլճը կը յայտարարէ թէ իր գործունէութեան մէջ իբր սկզբունք պիտի ունենայ Սահմանադրութեան օրէնքներուն անաչառ գործադրութիւնը. Սուրանիէի ընտրութեանց մէջ, ընտրողներու կամքի աղատութեան յարգանքը բոլոր մեծ տէրութեանց, մասնատորպէս Ռուսիոյ, զըրացի երկիրներուն և Սուլթանին հետ բարեկամական յարաբերութեանց պահպանումը կայն: Այս իմաստով շրջաբերական մը տպուած է պուլկար թերթերու մէջ:

ՊՕՐՍԱ

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Կառնու 10 Փետրուար, ՊՈՒՂՏԱՅ, Կակօն, Լիպրա, Արագա, Լիպրա, ԱՐԲԱ, Լիպրա, ՄԻՍԻՐ, Կակօն, Առապա, Կիւնկէ, Կէլմէքէ տիր, ՏԱՐԸ, Կիւնտէ, Առապա մուամէլէսի նարուլոն 21

ՎԱՐԴՕ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՔՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆԻՒԹ)

(Գին 1 Թրանց)

Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնաի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ Տ. Անտօն Կոչի մօտ. Ռուսչուք՝ Հայկ Մալախանի սրճարանը:

ՄԵԼԻՍԵՆԻ ԵՊՍ. ՄՈՒՐՍԵԱՆՅ Պատմութիւն Քրիստոնէական Եկեղեցւոյ ԿԱՂՍՑ

Տպարան «Արի» 1898

Գին 3.50 Ֆրանք

Կը ծախուի Կ. Պոլիս Պ. Պալենց գրատան և Ֆօքշան (Ռուսման/ա) Վ. Մամիկոնեանի մօտ:

ԲԱԶՄԱՎԷՊ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԿՈՒ

Տարեկան գին՝ 10 Ֆր. — 4 բուպիլ. — 2 Տոլար: Հասցէ՝ Բէսաքսիսն աը լա ոըվիս Բազմաթիւ. Ս. Լազար: Վընիզ (Իթալի)

ԼՈՒՍ ՏԵՍԱԻ

Տէր Ղեւոնդ Ք. Փափաղեանի հայերէն—ռուսմանիէն տարեցոյցը, պատկերազարդ և ճոխ պարունակութեամբ: Գինն է թղթակազմին 1 Ֆր. լաթակազմին 1.50 և փոստակազմին 2 Ֆր.: Դիմել հեղինակին, Կալսց:

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ Վ.Ա.Ն.Ս. Երկրոց քաղ. Երբէկեւս փողոց. Ստակալը Չեռեի կից. Կը տպագրուին հայերէն, պուլկարերէն, գաղղիերէն, յունարէն, տաճկերէն, և այլ լեզուներով այցեանոն, հասցեատոն, հարստեկան հրաւիրագիր, ազգաբարձիւն, նամակազուլեթ, պահան, մահագգ, վաճառականական ամեն տեսակ գործեր: Գիրք, լրագիր, և այլն: Գունաւոր եւ ոսկեգոծ զարդագործերու համար ամեն լեզուէ ճոխ առեւ եւ մասնաւոր գործիներ կը գտնուին: ՄԵՆ ԽՆԱՍՏԷ ԵՒ ՄՍ.ԲՐՈՒԹԻՒՆ ԳԻՆԵՐԸ ՅՈՑԸ ԴԻՐԱՄԱՍՏԵԼԻ ՌԵԼԻԵՎԵՆԵՆԻ ԵՒ ԿՈՒՆԵՐԵՆԻ ԵՒ ԿՈՒՆԵՐԵՆԻ ԵՒ ԿՈՒՆԵՐԵՆԻ:

ՌԵՃԱԴՐՈՒԹԻՒՆ Եթէ կուզէք հագնիլ կօշիկներ որոնք իրենց վրայ միացուեն ձեռի եւ դիմաց կուսութեան կատարելութիւն եւ մանաւանդ գինի չափաւորութիւն, առանց վարանկու դիմեցէ՛ք Ստեփան Խորասանեանի, Մուսալա, բաղնիք փողոց, հաճի Հասան էֆէնտի օթելին տակ. հաւատարմութիւն ապիտի օգտուիք:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ Печатница „Взаимность“ Варна.